ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2021թ. N 502-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՅԳԵՏՆԱԿԸ, ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԸ, ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ, ԾԱԾԿԸ, ՀԵՆԱՊԱՏՆ ՈՒ ՊԱՐԻՍՊՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի, 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի և 6-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի, հաշվի առնելով, որ այգետնակը, սանհանգույցը, աստիճանները, ծածկը, հենապատն ու պարիսպները կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և հիմք ընդունելով 0163594 սեփականության վկայականը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի և սեփականության իրավունքի վկայագրերը, շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունն ու Գալինա Մակարի Ղուլյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1.Կոտայքի մարզ գյուղ Նուռնուս «Գառնի» տնաշինական ընկերության թիվ 29 հասցեի անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Գառնի թաղամաս 2-րդ փողոց 29:

2. Գալինա Մակարի Ղուլյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի

Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Գարուն թաղամաս 2-րդ փողոց 29 հասցեի (ծածկագիր՝ 07-051-0105-0012) 0.10154 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության ընդհանուր 137 քմ արտաքին (115.05 քմ ներքին) մակերեսով այգետնակը, սանհանգույցը, աստիճանները, ծածկը, հենապատն ու պարիսպները ճանաչել օրինական:

3.Գալինա Մակարի Ղուլյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 143195,4 (մեկ հարյուր քառասուներեք հազար հարյուր իննսունհինգ ամբողջ չորս տասնորդական) դրամ՝ 100,7 քմ արտաքին մակերեսով այգետնակի օրինականացման վճար, 30971,16 (երեսուն հազար ինը հարյուր յոթանասունմեկ ամբողջ տասնվեց հարյուրերորդական) դրամ՝ ընդհանուր 36.3 քմ արտաքին մակերեսով սանհանգույցի, աստիճանների, ծածկի, հենապատի ու պարիսպների օրինականացման վճար, ընդամենը՝ 174166,56 (մեկ հարյուր յոթանասունչորս հազար հարյուր վաթսունվեց ամբողջ հիսունվեց հարյուրերորդական) դրամ՝ օրինականացման վճար:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում սույն որոշումն համարվում է ուժը կորցրած:

5.Հաստատել սույն որոշման անբաժանելի մասը կազմող «ԳԻՄ ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տված հատակագիծը:

6.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. նոյեմբերի 30
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 դեկտեմբերի 2021թ. N 503-Ա

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 17-Ն որոշմամբ հաստատված կարգը և սոցիալական աջակցության հանձնաժողովի առաջարկությունը՝ ***որոշում եմ.***

1.Սոցիալական պաշտպանության բնագավառում համայնքի ղեկավարի սեփական լիազորությունների իրականացման նպատակով համայնքի 2021 թվականի բյուջեից տրամադրել 120000 (մեկ հարյուր քսան հազար) դրամ՝ Բյուրեղավան համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն հատկացնելու համար՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանին՝ կատարել սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 01
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 դեկտեմբերի 2021թ. N 504-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ՋՐԱՎԱԶԱՆՆ ՈՒ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ և 22.1-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի, հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի տունը, ջրավազանն ու պարիսպը կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և հիմք ընդունելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2021 թվականի հոկտեմբերի 21-ին տրված N ԱԲ-2050 արխիվային տեղեկանքը, շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, այգեգործի գրքույկն ու Աիդա Լևոնի Հովհաննիսյանի լիազորած անձ Հովհաննես Պարույրի Մովսիսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Արովյանի շրջանի Նուռնուսի այգետարածքի թիվ 32 հասցեում գտնվող 07-051-0134-0014 ծածկագրով անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 1-ին փողոց 32:

2.Աիդա Լևոնի Հովհաննիսյանին (ծնված՝ 1947 թվականի սեպտեմբերի 23-ին) սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան

գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 1-ին փողոց 32 հասցեի 0.05 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության ընդհանուր 249.89 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, ջրավազանն ու պարիսպը ճանաչել օրինական։

3.Հաստատել սույն որոշման անբաժանելի մասը կազմող «ԵՐԻՑՈՒԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տված վերոնշյալ հողամասի ու շինությունների հատակագիծը։

4.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար։

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից։

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 03
ք. Բյուրեղավան

**Հավելված**
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2021 թվականի դեկտեմբերի 01 -ի № 503 -Ա որոշման

# ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ

| ՀՀ | Ազգանուն, անուն, հայրանուն | Հասցեն | Գումարի չափը (դրամ) |
|---|---|---|---|
| 1. | Հովակիմյան Աստղիկ Սամվելի | ք. Բյուրեղավան Օղակաձև փողոց 50 շենք 104 բնակարան | 20 000 |
| 2. | Աթաշյան Կարինե Խդրի | ք. Բյուրեղավան Օղակաձև փողոց 50 շենք 7 բնակարան | 20 000 |
| 3. | Դավթյան Աննա Լյովայի | ք. Բյուրեղավան Օղակաձև փողոց 4-րդ հանրակացարան 135 բնակարան | 15 000 |
| 4. | Հովհաննիսյան Ալվինա Սարգսի | ք. Բյուրեղավան Կոտայքի փողոց 48 շենք 62 բնակարան | 15 000 |
| 5. | Վարդանյան Սուդարիկ Հովսեփի | ք. Բյուրեղավան 1-ին փողոց 2 շենք 9 բնակարան | 10 000 |
| 6. | Վանյան Ռուբեն Գագոյի | ք. Բյուրեղավան Օղակաձև փողոց 4-րդ հանրակացարան 56 բնակարան | 20 000 |
| 7. | Մակինյան Տանյա Հովհաննեսի | ք. Բյուրեղավան Սարալանջ թաղամաս 3 շարք 5 տուն | 10 000 |
| 8. | Մելիքսեթյան Նունուֆար Ալեքսանի | ք. Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 21 շենք 18 բնակարան | 10 000 |
| Ընդամենը | | | 120 000 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ